

և աւելի փառքը մեծցած կը մնար, եթէ անոնք բնաւ տպագրութեան յանձնուած չըլլային :

Նիւթին համեմատ՝ կը գործածէ տաղաչափական իր անզուգական արուեստը : Իր այդ ձեռնհասութիւնը անվիճելի է . նիւթին համեմատ ներդաշնակութիւնը կը հիւսէ սքանչելի տաղաչափութեամբ :

*
**

Հիւլէն գրականութեան՝ մէկ հրաշալիերտ պտուղն է Հ. Բագրատունին . ստրնտուն յոյն է, և իր երակներուն մէջ յուսական կաթը շրջան առնելով, ինքը սնած է հիւլէն դպրութեան մէջ և համահասար իր հոյակապ հայերէնին՝ տիրապետած է նաև յունարէնին, այդ ուժով կրցեր է Հոմերը թարգմանել բնագրին հասար սքանչելիութեամբ : Վանականի կեանքը շատ երկար ապրած չէ, այլ ըլլաով տաներէց Տիւզեան տան՝ կրցեր է ազատօրէն պարապիլ իր սիրած մատենագրութեան : Բայց վանականի հոգին՝ միշտ վառ, հասար իր նախորդներուն՝ աշխատած է ճոխացնել վանքի ձեռագրատունը, աշխատած է կարևոր ձեռագրաց տպագրութեան, Փարիզ՝ մատենագրանին մէջ ուսումնասիրած է հարիւրէն աւելի հայկական ձեռագրերնր :

Տաղանդաւոր նկարիչ մը, վրձինը կը նետէ ըսելով, որ անկարելի է նկարել Հ. Բագրատունին . վասն զի ամէն վարկեան կը փոխուի ճիշդ անոր նահապետական և տանգէական դիմանկարի գոյնը : Եւ կարծես՝ «Հայկ» դիւցազներգութեան երփներանգ եռուզեռումը՝ կը փաղփիւնէ անոր այտերուն վրայ : Պատկառելի գլուխ մըն է եղած՝ նաև արտաքսապէս, բարձր ճակատ, խորհող աչուրներ, խոշոր քիթ, ձայնը որոշ, հասա՝ Ոլիմպոսէն արձագանգող : 1790-1869 կ'ապրի տաղանդի և պարզ կրօնաւորի կեանքը :

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Է Լ Ե Կ Տ Ր Ա

Սոփոկլի էն յաջող և միշտ թարմ կըտորներէն մէկը : Անուր նիւթ մը չէ որ բնմի վրայ կը դրուի . ընդհակառակն ընկերական էն հանրածանօթ և աշխատուած հարցերէն մէկն է որ կը ծեծուի : Ահաւասիկ դէպքը իր պարզութեանը մէջ . Ինչ պիտի հանդիպի եթէ կին մը չսիրէ իր ճանչցուած ամուսինը, և ապրած է ու ուզէ ապրիլ ուրիշի մը հետ : — Արգիլուած սիրոյ պատմութիւն մը :

Այս հարցին շուրջ ամէն բան կրնայ պատահիլ . ապահարզան, այրասպանութիւն, կնասպանութիւն, մարդասպանութիւն : Գիւրբին չէ գուշակել խնդրին լուծումը, լուծուելէն յտաղջ : Ազամեմունի և Կլիտեմեմեսարայի դէպքին մէջ. — որովհետև ասոնք են մարդուն և կնոջ անունները որոնք նիւթ եղած են դրամի, — կը հանդիպի այրասպանութիւն մը, մարդասպանութիւն մը և մայրասպանութիւն մը, որովհետև զաւակներն ալ իրենց մէջ ապրելու իրաւունք մը կը զգան : Ինչ պէտք են ընել ասոնք եթէ մայրը՝ միացած իր սիրելիին հետ, կը դաւէ հօրը կեանքին : Սոփոկլէս արդար գտած է ուր զաւակները սպաննեն թէ մայրը և թէ սիրելիը : Այս կրկին արեան հոսումովը միայն է որ տան պատիւը կը լուացուի, կը սըրբուի : Կու գայ նոր սերունդը, և ալ չմնար ստուերը մօտիկ անցեալին փտատածութեանց :

Բոլոր դերերը այնչափ յստակ նշանակուած են, որ կը թուին պայծառ մարմարի մէջ փորուած բոլորովին մերկ մարմիններ . առանց քօղի, առանց հանդերձի : Մարդ զանոնք իսկոյն կը հասկնայ . Իրենց մտածութիւնը դուրս կը հոսի մարմնոյն բոլոր նեարդներէն : Ասիկայ հիներու արուեստին առաւելութիւնն է, որուն Սո-

փոկէս գերազանցապէս ունի ընտրութիւնը:

Դայիակը իր երկարամեայ պանդխտութեան մէջ վայելուչ աւելցնելով ծերունի մը դարձեր է: Հաստատութեամբ հսկած է իր ասանդին վրայ, իր սանիքը, զայն մեծցուցեր է իր հօր ու հայրենեաց սիրոյն մէջ: Իրեն յայտնած է թէ մեծ առաքելութիւն մ'ունի կատարելու, — վրէժը խնդրելու իր հօրը մահուան, — և երբ ժամը բարեպատեհ համարած է, անոր առաջնորդած է հայրենի երկիրը, քաղաքը, տունը, և իրեն մատնանիշ ըրած է միանգամայն յարկը՝ ուր ցանկալի քոյրը զինք զողոցեր էր մահուանէն: Դայիակը կը յայտնէ թէ իր պաշտօնը դադրած է:

Որեստէս՝ իբր ազնուական ու բարեսունը արիւն, այս հանդիսաւոր վայրկենին ու տեղւոյն մէջ ուր իր ազատութիւնը իրեն կը յանձնուի, ուրիշ առաջին բառեր չգտնելով՝ բայց եթէ շնորհակալ ըլլալ դայիակին, այս սիրուն ծառային, որ իր աչքին կ'երեւի իբր ազնիւ ձի մը: Բայց որովհետև Հելլէները կը հաւատային թէ դատ մը՝ որքան ալ իբաւ, միշտ աստուածոց հանութեամբ պէտք է շահուի, Որեստէս Պիւթեան դիւթարանը դիմած է ուր հարցուկը իրեն յայտնած է գործելու եղանակը: Ինք՝ խեղճ երիտասարդ մը, միայնակ պիտի չկարենայ խիզախել իր մօր և սիրելիին դէմ, որունք բազմութիւն ունին իրենց հետ: Իրեն՝ պէտք է որ հնարքը զօրութեան պակասը լեցնէ: Դայիակը պիտի երթայ պատմէ թէ Որեստէս կառարշաւի մը մէջ կառքէն զըրոնով կը մեռնի, մինչ ինք սափորի մը մէջ անոր ածիւնը պիտի բերէ: Ո՞վ պիտի զօրշահար թըշնամիէ մը որ իր ածիւնը գրկած կը բերէ: Նա կը դիմէ, հայրենի աստուածներուն, հողին, տան, որպէս զի չթողուն որ իր ձեռնարկը ձախողի: Բայց իբր զինովութենէ սթափած՝ կը զգայ որ բանաստեղծական զգացումներու անձնատուր՝ դիպող ժամը պիտի կորսնցնէր: Տանը կը մօտենան:

Ներքէն ձայն մը կը լսեն որ ինք զինք

կը կոծէ: Էլեկտրան է թերեւս, կ'ըսէ Որեստէս: Եւ ի՞նչպէս կրնար իր սիրտը չձմիրի: Ո՞չ ապաքէն ամէն ձայն որ կը հեծէր՝ իր քոյրը պիտի ըլլար: Նա կ'ուզէ կենալ, ողոր լսել: Բայց դայիակը կը յիշեցնէ նախ պատգամը կատարել, հօրը գերեզմանը պսակել:

Էլեկտրա՛, խաղին առաջին անձնատուրութիւնն է. անունը կու տայ անոր. աստուածային ստեղծագործութիւն մը: Բարենշան՝ դեռատի օրիորդ մըն է որ կը զգայ բոլոր անտանելիութիւնը իր կացութեան: Իր տան մէջ մայրը սպաննած է իր հայրը: Ոտար մը կ'իշխէ հոն՝ զոր ինք չի ճանչնար: Բայց այս օտարը կը խլէ իրմէ ամբողջ մայրը՝ որ այլ ևս խելին մը կը դառնայ: Նոր զաւակներ կը ծնանին՝ որոնք կու գան ժառանգել իրենց տեղ ոչ միայն իր ստացուածքը այլ նաև մայրենի սերը: Տան մէջ զինք օտար կը զգայ: Իր հետ կը վարուին իբր աղախնի մը հետ: զինք կը տանջեն հարուստով և երեզարձութեամբ: Իր միակ մեղքն է որ չկրնար մոռնալ հայրը, համակամիլ, ճկիւլ, լուել: Բռնամահ հօրը յիշատակը իր սեւեռումը կը կազմէ, զինք ամէն տեղ կը հալածէ, և իրեն մէջ ուրիշ ճաշակ չթողուր՝ բայց եթէ ողբին: Իր աստուածը՝ Նիորէն կ'ըլլայ, իր սիրած թոչունը՝ ծիծառնը: Իր թըշուառութեան մէջ ալ մտքի արթնութիւնը կը պահէ, կը զգայ որ կրնայ անտանելի ըլլալ ընկերութեան, բայց ուրիշ կերպով չկրնար ըլլալ: Իրեն մէկ յոյս միայն կը մնայ, Որեստէս եղբայրը, զոր ինք մահէն ազատեր է, դեռ տղայ: Որեստն է՝ զոր նամակներով կը տեղեկացնէ իր վիշտերուն, որ պիտի գայ հայրենի տան վրէժը հանէ, զինքն ազատէ: Բայց կը թուի թէ Որեստէս ամէն բան մոռցեր է, միշտ կ'անձկայ զալ՝ բայց երբէք չիզար, և ոչ իսկ աւետարեր մը լուր մը կը բերէ անոր գալուն:

Որո՞՞ւ՛ սպանեալ անհանգիստ՝ ես անզուսկս եզգելիս:

1. Էլեկտրա, Թրք. Բագրատունի, Ճաշից Հին և Նոր Ողբերգութեանց, էջ 134:

Անհարսնացեալս օրերոգ՝ արտօսբալից շրջեմ մըս
Յայս վիշտ անկէտ:

Այսպէս է որ նա կ'ըմբռնէ ամբողջ ա-
մալութիւնը իր կացութեան: Այսուհան-
դերձ հաստատուն հաւատքը՝ որ ԼԵՌԱ-
ԾՈՒԹեան խորն իսկ կը պահէ ինքն իր
վրայ, յափշտակիչ շնորհք մը կու տան
իր դէմքին. անդիմադրելի՛ երբ, ա՛լ մտե-
րիմ չունենալով, իր ցաւերը լոյսին կը
յայտնէ:

Ո՛վ լոյս զըւարթ սըրբափայլ,
Էս միահարթ օդ երկրի,
Քանիցս ողբոց յիս նըւագ,
Քանիցս ընդ կուրծք արեւոտս
Լըւար բախիւնս հարուածոց՝
Ի մեկնել Թուփ զընթաց՝:

Ինչ կ'ուզէ Էլեկտրա այս քնարակա-
նով, ո՞վ պիտի ըլլայ իր մխիթարիչը: Հոս
է որ Սոփոկլ կը գտնէ ճշմարտութիւն մը,
պարբ: Անձնաւորութիւն մը չէ այս պարբ,
իր անհատականութեամբը, որոշ կիրքե-
րովը, հաշիւներովը, տեսակ մը զարափար
է, հասարակաց կարծիքը, խիղճը՝ մար-
մնացած մանաւանդ զրացի կանանց ու աղ-
ջիկներուն մէջ: Ամէնքը գիտեն Էլեկտրայի
պատմութիւնը, գիտեն ինչ կիրքէ զրգուած
կլիտեմնեստրա սպաննց Ազամեմնոնը, գի-
տեն Էլեկտրայի սէրը իր հօրը համար, և
բոլորը՝ ինչ որ կը կրէ այս սիրոյն հա-
մար: Ամբողջ իր անմխիթար ու անհաշ-
տելի կացութիւնը: Եւ երբ գիտեն այս բու-
լորը՝ նշան է թէ անոնք կը սիրեն Է-
լեկտրա, զայն ելջանիկ կ'ուզեն տես-
նել, և չեն ուզեր որ իր ցաւերէն ուրիշ
ցաւեր ծնուցանէ իր անձին համար: Գի-
տեն նոյն իսկ որ Էլեկտրա եղբայր մ'ունի
հեռաւոր՝ որուն կը սպասէ զինք ազատե-
լու համար: Պիտի գոյ՛ չէ այս եղ-
բայրը. ահաւասիկ հարցումը: Պիտի գոյ՛,
կ'ըսէ Էլեկտրա. Հաատամ, ապա քէ ոչ՝
երկայնակեաց ոչ էի՞:

Իրաց մէջ անհասկանալի խորհուրդ մը
կայ. վարկենին մերձաւորութիւնը ամէն
բան զորդման մէջ կը դնէ ինչ որ կապ
ունէին իրարու հետ. Որեստ կու գայ հօրը
վրէժը լուծելու: Ազամեմնոնի ստուերը կ'ե-
րեւութանայ երազին մէջ կլիտեմնեստրայի
և զայն կը խռովէ: Հին խիղճը կ'արթնու-
նայ. պիտի մեռնէր ինք ալ իր ամուսինը
մեղսներուն համար. Համայն՝ պէտք էր հաշտ
առնել այս ստուերը: Ուրկէ՞ արթնցաւ
այս տարիներով քնացած ստուերը: Կը
մնայ արդեօք հոսանք մը մեռնողին և մնա-
ցողին մէջ, մինչև որ վերջնապէս մեռնին:
Իրօք՝ անոնք բնմ կու գան և կը բողոքեն:

Քրիստոթեմիս, մօրէն զրկուած, մեռե-
լոյթներ կ'իբրժայ տանիլ հօրը գերեզմա-
նին: — Ո՛վ է այս Քրիստոթեմիս, ոչ ուրիշ
ոք. համամայր և համահայր քոյրը Էլեկ-
տրայի: Եւ սակայն բնաւ չունի այն ա-
րիւնէն, որ կ'եռայ Էլեկտրայի երակներուն
մէջ: Քրիստոթեմիս՝ այսպէս ըսուած խոհեմ
ներէն է: Գիտնալով հանդերձ որ մայրը
առանց ոչ մէկ պատճառի սպաննց հայ-
րը, կը յարմարի մօրը կամքին: Ո՛չ ա-
պարքէ նա աւելի զօրաւոր է միացած Է-
գիստոսի. ինչ կրնայ ընել ինքը խեղճ աղ-
ջիկ մը առանց նեցուկի: Բանին միակ ու-
ղիդ թեւազրութիւնը իրեն երեցեր է իշ-
խանաց սալ տեղի՞: Բայց ասիկայ իր բա-
նին թեւազրութիւնն է. կրակ մը կը մարի
աչքերուն մէջ, և զեղեցկութիւն մը կը
խամրի իր այտերուն վրայ: Ինքը՝ խեղճը,
բարի է և չգիտեր ինչ ընել: Իր խօսքերը
մերթ թեւազրութիւնն են կլիտեմնեստրայի
զգացուններուն. մերթ ալ քրոջական ան-
կեղծ ու մանկական զգացում մ'ունի՛ երբ,
օրինակի համար, կը յայտնէ Էլեկտրայի
թէ չուած է շշնջել տան մէջ, անլոյս տեղ
մը զրկել զինք՝ եթէ իր ողբերէն չզարդի:

Ու այս այնքան պարզ, այնքան տկար
ու այնքան անկեղծ քրոջ հանդէպ Էլեկ-
տրայի դրբը հաստատութիւն մ'ունի որ
յարմար է խախտելու բոլոր համոզում-
ները: Երկու քոյրերը բանակոռու մէջ են:
Քրիստոթեմիս խոհեմութեան փոքրածայքը
կը խօսի, Էլեկտրա ընդվզումի գիւ ձայ-

1. Անո, էջ 132.
2. Անո, էջ 139.
3. Անո, էջ 141.

ներ, Անոնք ճարտար են իրենց անդրա-
դարձ հարուստներուն մէջ ինչպէս երկու
մարդուած ըմբիշներ կրկէսին մէջ, Հա-
ճայք մըն է դիտել իրենց պայքարը: Ո՛վ
պիտի ըլլայ աւելի զօրաւորը:

Քրիստոթեմիս սահմակած կը մեկնի՝ երբ
Էլեկտրա խորը կ'իջնէ իր անձին և կը
խզէ կեանքին հետ, յանձն կ'առնէ մահը,
զայն կը փնտռէ, անոր ընդառաջ կ'եր-
թայ: Էլեկտրա իրեն կ'աղաչէ իբր իր
վերջին բարեւ տալու համար:

Այէ յո՛վ երթայցես, ո՛ւր ըզրեւորը տանիս:

ՔՐԻՍՏՈՒԹԵՄԻՍ

Առաքէ զիս մայրս՝ Հեղուկ Կուրքս ի հօրքն զամբանս...

ԷԼԵԿՏՐԱ

Յուսմէ՛ք ի սիրելեաց զերգեակ, և ո՛ւր այդ հաճոյ:

ՔՐԻՍՏՈՒԹԵՄԻՍ

Յարհարաց զիշրայնոց, որպէս ինչ ինձոք թուի:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ դէք հայրենաբունը, ընդ մեզ լերուք զէթ այժմեկ՝:

Այս զիշրային արհաւիրքները՝ փայլակ
մը կ'ըլլան Էլեկտրայի ամբոխուած մըտ-
քին մէջ. կու գայ ուրեմն վերջապէս ար-
դարութեան ժամը: Կարմիր կենդանի ա-
րեան զօրաւոր հոսանք մը կը վազէ ե-
րակներուն մէջ, յետ այնքան բռնաւոր
ճնշումներու և զգուանքներու: Արեան այս
նոր հոսանքովը Էլեկտրա այնքան զօրա-
ւոր է որ կը տիրէ քրոջը վրայ, զայն կը
զբաւէ և կ'ազատէ Կլիտեմնեսարայի իշ-
խանութենէն: Այրասպան մօ՞րը կ'իշնայ
միթէ՞ օրինաւորապէս պատուել հայրը: Ո՛չ.
Իրաւունքը մերը չէ՞, սիրալիր աշխիկնե-
րուս, մեռելոյթ տանել մեր հօր, խնդրե-
լով:

. . . Գալ յանդերձոց հառ առ մեզ,
Օղեսկան յատեկեաց, և որդեկին՝ Որեոտեայ՝
Կենդանի հեզօր քազկու Կոթուր կոխել զթըշնամբս՝:

Լաւ զգացումներ են, լաւ, կ'աղապակէ
հասարակաց կարծիքը, և Քրիստոթեմիս տե-
ղի կու տայ:

Բոլոր նշանները, Կլիտեմնեսարայի ար-
հաւիրքը, Ազամեմնոնի երևութանալը՝ այն-

քան բարի գուշակներ ժողովրդեան համար
թէ արդարութիւնը պիտի գայ:

Նկարագրի որքան տոկունութիւն պէտք
է ունենայ այս Էլեկտրա որ ստիպուած
է դիմագրաւել այնքան մարդոց և ամէն
մարդոց՝ առանց խորտակուելու: Ամենէն
աւելի տաժանելի կոբւր իր մօրը հետն է:
Կլիտեմնեսարա իշխանական կլին մըն է,
լեցուն կեանքով և իրահամարձակութեամբ,
մէկը այն աղիտաբեր կիներէն որոնք որու-
շուած են իրենց ծոցին մէջ ընկղմելու այն-
քան կեանքեր ինչպէս սրբիբուս ծովի մը
մէջ: Կո վերստին կը գտնէ իր աշխիւր
դուրս՝ տրտունջի ու ողբերու մէջ օտար-
ներու առջեւ, ինչ որ զինք ամօթով կը
ծածկէ: Անիրաւ տեղ սպանեցի Ազամեմ-
նոնը, — ո՛չ, կը մտածէ Կլիտեմնեսարա:
Չունէ՛ր ինք իրաւունք, մայրը՝ սպանելու
ամուսին մը որ այնքան անպթօրէն կը գո-
հէր իր մէկ դուստրը շան մը քամահանոյ-
քին, ինչպէս էր Հեկենէ: Այս ջրմանայնքը՝
հանգստացնելու խիղճը, աւելի կը զինէ
Էլեկտրա, որ իր հասակէն վեր, գիտէ և
կը զգայ բոլորը: Կլիտեմնեսարա սպանած
է հայրը, իփեղեհիայի վրէժը լուծելու հա-
մար. երբէք պիտի երեսէ ձգէ՞ր մայր մը
իր հարազատները՝ եթէ ստուգիւ անոնց
սիրոյն համար էր որ կը փոզոտէր ամու-
սին մը: Ո՛չ. երբէք որդեսիրութիւնը չէր
որ զինք մղեց այս ոճիրին. միւսն էր, սի-
ղեխը, Էգիստոսը, որ զինեց իր բազուկը:
Իրաց այս հասկացողութեան մը ստուերը
կ'անցնի Էլեկտրայի դէմքին վրայ, իբր
Ազամեմնոն իր տրորուած ու տխրամած
դէմքովը զար անցնիլ առջեւն: Կլիտեմ-
նեսարա ուրիշ ապաւէն չունի՝ բայց եթէ
սաստուածներուն դիմել, որպէս զի երազին
մէջ երեւցած ցնորակոծ տեսիլները՝ եթէ
բարի բանի համար յայտնուեցան՝ իրեն
վրայ կատարուին, եթէ չար՝ իր թշնա-
միններուն դառնան:

Աստուածները սակայն խոհմութիւն

1. Անդ, էջ 142.
2. Անդ, էջ 144.

ունին երբէք անձամբ չյայտնուելու. անոնք կ'առնեն ստէպ կերպարանքը սպիտակ մօրուցով ծերու մը կամ ո՛ր և է երկրաւոր ու զգալի ձեւ մը, իրենց դերը խաղալու համար: Այս անգամ, կլիտեմնեստրայի աղջանքին, Որեստէսի դայեակը կը յայտնուի: Նա կը փնտնէ կլիտեմնեստրայ, զայն իր առջեւ կը գտնէ, կը ճանչնայ: *Չի հակոցն դշխոյի տեսիլ իր է վաշիրալ՝, և իրեն կ'աւետէ՝ համառօտ և որոշ, մեռա Որեստես՝: Ապահով է իր խօսքին արդիւնքին վրայ. չէր գուշակեր միայն էլեկտրայի յուսահատութիւնը, զոր չի ճանչնար: կլիտեմնեստրայ հպարտ է իր երջանկութեան վրայ: Ո՛ր իցեն Արաւազոյի փայտատկունք՝. միակ աղաղակն է ամբոխին՝ այս գոյժին հանդէպ, որ կը թեւամաշտի արդարութեան մեծ սկզբունքներուն վրայ՝ իրեն առջեւ ճշմարտութիւնը այսքան անիմանալի կերպով քօղարկուած տեսնելով:*

էլեկտրայ անշարժ կը կենայ բեմին վրայ, մտածելով իր հէք եղբօր վրայ, որ արժանի չեղաւ իր կոծերուն ու թաղու մին:

Իբր հսկահոսանքով մը ոգեւորելու համար այս մարմինը՝ որ ի լուր Որեստէսի մահուան րօթին, ահա նուաղելու վրայ է, Քրիստոթեմիս կը յայտնուի նոյնքան կտրուկ ու որոշ աւետելու թէ Աստ առ մեզ է Որեստես՝, ինչ որ էլեկտրայի դառն ծիծաղը կը շարժէ: Բայց Քրիստոթեմիս պարզ սիրտ ունի. հօրը գերեզմանին մեռելոյթնեք տարած միջոց, զայն արդէն զարդարուած կը գտնէ գոյնզգոյն ծաղիկներու փունջով, և ոռոգուած կաթով: Ո՞վ իրաւունք ունէր այս փափուկ սիրտը ունենալ Ազամեմնոնի վրայ. եթէ ոչ ինք կամ էլեկտրայ, և որովհետեւ իրենք չեն ըրած, հետևաբար առանց ո և է տարակոյսի Ո-

րեստէս եկած ըրած է: Քրիստոթեմիս այնքան վստահ, այնքան ուրախ է իր մտածելու այս կերպին վրայ, որ ընտանի սարսուռ մը կը զգայ ներսը և աչքերը արցունքով կը լեցուին: *Ի՞նչպէս պիտի հաւատայ ուրեմն Որեստէսի մահուան գուժին՝ զոր կը հողորդէ իրեն էլեկտրայ աւելի որոշ, աւելի հաստատ գիտութեամբ մը: Երկու քոյրերը փնտռելով փարատել այս իրար գիրարը հակասող զգացումները՝ որ արևու և ստուերի խաղերու պէս գիւրենք կը շուարեցնեն, կը հասնին շօշափել տխուր իրականութիւնը թէ միայն մնացեր են: Ի՞նչ ընել. ըլլա՛ւ թէ չըլլա՛ւ: Հոս դարձեալ երկու քոյրերը կը զատուին իրարմէ: Քրիստոթեմիսի ահաւոր ու անմիտ կ'երևի էլեկտրայ, և խոյս կու տայ անկէ ինչպէս մեզոքէ մը: Ի՞նչ սոսկալի բան մը սամբը է այս էլեկտրայ. ոչինչ. շատ պարզ բան մը. որովհետեւ ալ աշխարհիս վրայ ուրիշ մարդ չէ մնացեր իրեն արդարութիւն ընելու համար, ինքը, էլեկտրայ կը զգայ իր երակներուն մէջ աւելցած արիւնը իր եղբօրը. իրեն մէջ կը զգայ պարտքը սպաննելու էգիստորը:*

Ժողովուրդը, անհամբեր այլ ևս անորոշ կացութեանէն, որ կարծես զինք կը խաղցնէ, կը յուզուի, կը զայրանայ, և արդարութիւնը կը պահանջէ, ինչ գտով ալ ըլլայ: Ամբողջ որոշ համակրութիւն մը կը ցուցնէ էլեկտրայի համար, որ անհրանարին զրկուած, դեռ չճկիր և բարձր կը բռնէ ազնուական զգացումները:

Եւ ահա Որեստ կու գայ տեսարանի վրայ, Որեստ մեռած և կենդանի: Ո՞վ է այս գեղեցիկ երիտասարդը, նորատէգ մօրուօք, բեղուն մարմնով և հուժկու: Ոչ ոք զինք կը ճանչնայ և ոչ իսկ այս էլեկտրայ, որուն կը հանդիպի Որեստ առաջին անգամ: Հիւր մըն է, ղրկուած բերելու Որեստի աճիւնը՝ սափորի մը մէջ: Երկուդ մը կը սողի էլեկտրայի մարմնոյն մէջ: Կը գուշակէ որ իր ցաւը ձեռքին մէջ պիտի ունենայ. սափորը գիրկը կ'առնէ և արցունքներու հեղեղին մէջ կ'ընէ այն գերաշխարհիկ ողբը ուր կը զեղու իր թշուառ

1. Աճ, էջ 152.
 2. Աճ, էջ 152.
 3. Աճ, էջ 157.
 4. Աճ, էջ 161.

ու դեռաաի օրիորդի ու քրոջ սիրաբ, ան-
հասանելի փափկութեամբ մը:

Որեստ ի լուր այն անկեղծիկ ու ջերմ
սիրոյն, որ առանց վերապահութեան իր
նկատմամբ կը յայտնէ, և զրկանքներուն
ու յուսախաբուութեանց այս աղջկան՝ որ իր
քոյրն է, չկրնար այլ ևս զսպել զգացումն
ու կեղծիքը, և ծայր կու տայ այն տեսա-
բանին, որ յունական թատրոնին ծաղիկն
ու սքանչելիքն է:

ՈՐԵՍՏԷՍ

Ո՛հ, ո՛հ, զի՞նչ սասցից, յո՞ր քան ևկից՝ վարանեալս,
Որ ո՛չ եւրս զօրեմ բընաւորել զգեզուս:

ԷԼԵԿՏՐԱ

Ձի՞նչ վիշտը իցեն քո՞, զայդ առ իմէ՞ սասցեր:

ՈՐԵՍՏԷՍ

Միթէ այդ էլիկտրեանն իցէ տեսիլ քո շքեղ:

ԷԼԵԿՏՐԱ

Նոյն իսկ ինքն նա է, և կարի չէք չուսուական:

ՈՐԵՍՏԷՍ

Արդ աւաղ ողորմելի թըռուտութեանը այգիկ:

ԷԼԵԿՏՐԱ

Ձե՞ է, ո՛վ չհիւր, զի այդպէս չծծեն յիմ վերայ:

ՈՐԵՍՏԷՍ

Ո՛վ մարմին, անաստուած ու անարգաբար ծընդեցեալ:

ԷԼԵԿՏՐԱ

Ոչ զոք այլ սպաքէն, բայց զիս, ո՛վ չհիւր, աւաղես:

ՈՐԵՍՏԷՍ

Աւաղ ամուրի և եղիական քում կենաց:

ԷԼԵԿՏՐԱ

Ձե՞ այդպէս արդեօք, ո՛վ չհիւր, յիս նայեցեալ հառաչես:

ՈՐԵՍՏԷՍ

Քանզի ոչ ինչ զեռէի յիմաց չարեացն հասնուց:

ԷԼԵԿՏՐԱ

Իսկ յիմէ՞ իմեքէ յասացելոցն ծանեար:

ՈՐԵՍՏԷՍ

Ձի բազում չարակրութեամբք նընաւոր տեսի զքեզ:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ սակայն ըզսակաւս ինչ նըշմարնս յիմ վըշտաց:

ՈՐԵՍՏԷՍ

Իսկ զիմար լի՞նիցի զբոխազոյն ինչ քան զայդ:

ԷԼԵԿՏՐԱ

Ձի սպանչաց եմ կենակից:

ՈՐԵՍՏԷՍ

Ո՛յր. և ուստի՞ զայդ տես:

ԷԼԵԿՏՐԱ

Հոր իմոյ և զի բընի սպաս հարկանեմ ես նոցա:

ՈՐԵՍՏԷՍ

Եւ ո՛վ այն ի մարդկանէ՞ որ բաւիպէ զքեզ յայն հարկ:

ԷԼԵԿՏՐԱ

Այն որ մայրն անուանի, և ոչ ինչ մօր նըմանէ:

ՈՐԵՍՏԷՍ

Ձի՞նչ աննէ. ձեռո՞ք արդեօք, թէ զկեանքս քո ծիւրելով:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ձեռք և զըզուանք և մմենայն դանուութեամբ:

ՈՐԵՍՏԷՍ

Եւ քեզ չի՞ք ոք օգնական, և ո՛չ որ զնա կարճեցէ:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ոչ ոք. զի զոր էքն ինձ, դու զնա մոխիր մատուցեր:

ՈՐԵՍՏԷՍ

Քանի՞օն, ո՛վ անբաղդ, զըթամ ի քեզ հայեցեալ:

ԷԼԵԿՏՐԱ

Դու եեթ ի մարդկանէ, զետեա, զի այժմ յիս զըթաս:

ՈՐԵՍՏԷՍ

Ձի միայն ևս եկի նըմանավիշտ քեզ յազգես:

ԷԼԵԿՏՐԱ

Մի՞ արդեօք յազգակոնացս ուստեմ իցեն դու եկեալ:

ՈՐԵՍՏԷՍ

Ասացից զայդ սպաքէն, թէ մըտերի՞ք են զոքա:

ԷԼԵԿՏՐԱ

Է և է մըտերմութիւն առ ուխտադաւս ասիցես:

ՈՐԵՍՏԷՍ

Արդ ի բայց զիբ զայդ անօթ զի գամմեայն ինչ ուսցես:

ԷԼԵԿՏՐԱ

Քեզ ի զիս արեւալ երդուեմ, ընդ իս զայդ մի՞ աննեք,
[չհիւր:

ՈՐԵՍՏԷՍ

Աչէ լո՛ւր ինձ որ տեսմս, և ոչ բընաւ սաըրջացես:

ԷԼԵԿՏՐԱ

Վասն արբուն մանկութեանի՞ ըզսիրելիս մի՞ բառնար:

ՈՐԵՍՏԷՍ

Չանուում յանն է քեզ թողուլ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛հ եղկելես վառն՝ քո,
Որեստէս, եթէ է քո գերեզմանն զբրկեցիմ:

ՈՐԵՍՏԵՍ

Ա՛ս ինձ ձայն բարեհըմայ, զե՛ ստ արժանի ոչ հնճես:

ԷԼԵԿՏՐԱ

Ընդ հզբայր զըրսուսմահ ի՛բր ոչ հնճեմ յիրաւի:

ՈՐԵՍՏԵՍ

Քեզ ինչ ոչ վայելէ զբարբոռող զայդ արձակել:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ա՛յդչափ ինչ անարզ յաչս իցեմ ես մեռելոյն:

ՈՐԵՍՏԵՍ

Ոչ ուրուք յաչս անարզ, այլ սակայն այդ չէ ինչ քո:

ԷԼԵԿՏՐԱ

Իսկ թէ այս Որեստեսյն իցէ մարմին զոր հըրեմս:

ՈՐԵՍՏԵՍ

Եւ սակայն՝ ոչ Որեստեսյ, բայց թէ ըանիւք պանուհեալ:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ո՛ւր ուրեմ իցէ տառապելոյն գերեզման:

ՈՐԵՍՏԵՍ

Ո՛չ ուրեք, զի և չի՞ք ինչ գերեզման կենդանույ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ որդեակ, զի՛նչ ասացեր:

ՈՐԵՍՏԵՍ

Ոչ գոյ ինչ սուտ է բանս իմ:

ԷԼԵԿՏՐԱ

Կենդանի ուրեմն է այրն:

ՈՐԵՍՏԵՍ

Եթէ և ես կենդանի:

ԷԼԵԿՏՐԱ

Ապա զու իսկ այն ես:

ՈՐԵՍՏԵՍ

Ձալսըդ ազէ յայս արկեալ
Ի հօրն մատանի, ծանիբ թէ ստո՛յգ խօսիցիմ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ լոյս սիրատենչակ:

ՈՐԵՍՏԵՍ

Սիրատենչակ, վըկայիմ:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ բարբառ, ուրեմն հասե՛ր:

ՈՐԵՍՏԵՍ

Մե՛ խնդրեր այլ ինչ յայլուստ:

ԷԼԵԿՏՐԱ

Դու է զի՛րիս իմ յայտուիկ:

ՈՐԵՍՏԵՍ

Այտուհետև միշտ եղեց՛ի:

Թատրերգութիւնը հոս կ'աւարտի: Յա-
ջորդին մէջ ինչ որ զմեզ կը հետաքրքրէ
Դայեակին ծանօթութիւնն է Լիլեկարայէ:

ԷԼԵԿՏՐԱ

Ատուածո՛վքն, ազէ, հղըմը, ո՛վ իցէ այրդ այդ աստ:

ՈՐԵՍՏԵՍ

Ո՛չ ծանեար:

ԷԼԵԿՏՐԱ

Եւ ոչ զուշով յիշատակս անկանի:

ՈՐԵՍՏԵՍ

Ո՛չ յիշես՝ ոյր երբեմն աւանդեցեր զիս է ձեռս:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛ւմ ումեք, զի՛նչ խօսիս:

ՈՐԵՍՏԵՍ

Որո՛յ ձեռամբ՝ քով ինամովք՝
Ի դաշտ փովկէտցուց առաքեցայ զազատարար:

ԷԼԵԿՏՐԱ

Սա՛ է նա զոր երբեմն հաւատարիմ զըտի ես,
Ի բազմաց անտի միայն՝ է խորշիւ հօր մերոյ:

ՈՐԵՍՏԵՍ

Նո՛յն իսկ է մի՛ ևս այլ զիս ըանիւք բազմօք հարցանիս:

ԷԼԵԿՏՐԱ

Ո՛վ լոյս ցանկալի, ո՛վ դու միայն կեցուցիչ
Տանն Ազամեմի, զիմրդ եկիր, զո՛ւ ես այն՝
Որ է շատ ցաւոց երկանց ըզս և զիս փըրկեցեր...
Ուրախ լիբ, ո՛վ հայր, զի զժայր թըւիմ տեսանիւ:
Ուրախ լիբ, բայց զիտես, զի առուիւ քան ըզնուս,
Ատեցի և սիրեցի զքեզ է միւսմ յայսմ աւուր՝:

Դայեակն է որ առաջին անգամ զուսեց
Որեստէսի մահը:

Կրկին սպաննութիւնները՝ Լիլեկարայի և
Կլիտեմնեսատրայի, — երկհրևա՞յ, ինչպէս

1. ԱՆՊ, էջ 173-178.
2. ԱՆՊ, էջ 182-188.

ԵՐԳ՝ ԱՆՈՒՐՁԻՆ

կը կոչէ զանոնք Սոփոկլէս, կը կատարուի՝ համառօտ երկուքն ալ չունենալով ուրիշ խղճահարութիւններ յայտնելու՝ բայց եթէ իրենց յանցապարտութիւնը: Ու այս նեխած ու թունաւոր արեան լճին վրայ կը բարձրանայ Էլեկտրայի դէմքը, նշուլարձակ, կենսալիւր և կենսատու, ինչպէս արեւ մը:

Փողոզուրդը կը հրճուի ու կը ծափաւհարէ:

Բեմական տարեգրութեանց մէջ Էլեկտրայի դէմքը, կը մնայ միշտ աննման ու պարզ, մինչ կ'լիտեմնեստրա իրեն արեանակից ազգական մը կը գտնէ Գոթոլիայի մէջ և կ'լիտեմնեստրա ու Էգիստոս աւելի աղիտաբեր և աւելի նենգաւոր երկնիւազ մը կը գտնեն Գերդրուտի և Բուլոնիոսի մէջ:

Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ



© ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ©

Ս Պ Ա Ս Ո Ւ Մ

Մինչև ե՞րբ այսպէս սպասել անդադար, որ պահանջներու յորդուքիւնն ուժգին Ա՛լ ինձ խրճայէ վիշտեր անհամար, եւ իր հրդեհով լայրէ՛ իմ հոգին:



«Սակայն, զեւ չէ՛ ծանն, ըսպասէ՛» կ'ըսեն. եւ իզուր յաճախ կը փորձեմ մարեւ Բոց հերարթը որ կ'այրէ զեւ ներսէն... Ի գ՞ուր կը փորձեմ, ի գ՞ուր գայն մարեւ...»



Համակերպումի լուծին տակ խուժում, Մինչ կը ջանամ հուրն անթփռել սրախս, կը յոգնին այլևս ջիգերն իմ վատուժ:



Գիշերն մինչև լոյս կը յուզուի՝ հոգես. կը չարբարէ զեւ մղձաւանջ մ'անհուն. եւ եւ կը հակեմ ցաւերու անցուն:

Սրտես սէրէն համբո՛րր ցեղի, ս՛վ Անուրջ, Անհունորէն պաշտելի, Գուն իրզիբուս վրայ ազցատր Գուրգուրացող ս՛նք փայտան ես զեղանի, Որուն բոցեղ ցուրերուն շուրջ եւ կը սիրեմ թեկեր բաղնիկ ամեն օր, Գուն եւ որ իմ կ'առաջնորդես աշխարհներու մէջ աւ Ուր զըւարթ է կենցեղն պատկեր, {զուր, Ուր մտացումը կայ զոնէ սո՛ աշխարհին սխտաւոր, Որուն թոշնէ մեր հոգեներն են զզուեր:

Ի՞նչէ զո՛ն ալ մերթ շօրօթս Ձեւ զրկեղ մէջ աւազնական, Ի՞նչէ զո՛ն ալ զեւ թփայտող տանջանքներն Մերթ լազատես, Իմ յուստիար վայրկեաններու ապագան Պիտի ըլլալ լոկ պատրանք մը ջըլստող, Իչ իմ հըզօր բազմանքներու բազմագան՝ Պետէ ջըզո՛ք երբէք արև մը շրջող:

Ո՛հ թէ այտօր, անգամ մըն ալ, Թեկերուդ մէջ զրկէիք զեւ ցանկազառ. Որովհետև շիժա դարձաւ Մտքես վըրայ ըստուեր մ'ինկեր, կը տանջէ զեւ անդա- ինձ կըթուէ թէ զո՛ն միայն {զար Կրնաս ըլլալ իմ կենցիտ Նաւահանգիստն անզորութեան, Ուր հոգմերէ աւելիճուած խեղճ հոգես խաղաղութեան խաբիսի նետել կը զգնի. Անոր համար կը խնդրեմ որ Ուժգին սեղմես զեւ թեկերով հուշնի, եւ ջըթողուս որ շնանամ քու ափերէդ քեզմատր:

Արդեօք զիտես, արփիտազեղ զու Անուրջ, Որքան յաճախ կը թափառեմ վըճատութեան առանցքին շուրջ. Որքան յաճախ սե խաբիճնիք ու մաղձձձ Կերաշխարհիս մէջ կը յորդին, եւ կը սպասուան մահացնել իմ բազմք. Որքան յաճախ առնականներս համարէն՝ Մաղըբուր են խաբէութեամբ մ'անուրէն:

Հիւանդն եմ եւ սե խոճիբու ծանրատար. Սրտես խոջո՛ք Տառապանքի բընավայր. Յաւի զգժոխք մ'ճիժա լանջքին մէջ վըճատ Գժնիկ խոցեր կը պատրաստէ անդադար:

Ու ես ինչպէս մանուկ մ'անզօր, Որ կը շնէ խոր զհերու սեմին վըրայ, կը պաղատեմ թաց սչեքրով արտատուաթոր, Որ ժպիտ մը արփնի, կամ յոյսերու ջրվէժում մը յորձանուս՝